

սուրբ գիրքս ի թվին. Հայոց ՌՃԻԱ (— 1672) Մարտ
ամսոյ 11. (— 1) օրն ուրբաթ: Եւ քրիստոսի Փառք
յաւիտեանս ամէն:

1718. — Յայտարար.

“Արդ գրեցաւ սա ձեռամբ մեղապարտ, անարժան եւ
անպիտան եւ փցուն գրչիս Արուսթիւն քահանային յան-
ցաւորի, ի թվականութեանս Հայոց ՌՃԿԵ (— 1718) ի
քաղաքն Կեսարիոյ եւ ի գեօղն որ կոչի Եւզառայ. ի
դուռն սրբոյն Ստեփաննոսի նախավկային եւ Սրբոյն
Սարգսի Զօրավարին եւ սրբոյն Մեղկեոքոսի Զինաւորին
եւ սրբոյն Դէորգեա եւ Թէոդորոսի զօրավարացն, ի
Հայրապետութեան Տեառն Աստուածատուր Կաթողիկոսի,
եւ յեպիսկոպոսութեան այսմ նահանգիս եւ առաջնորդ
Սահակ վարդապետ:

Արդ՝ աղաչեմ զամենայն դասս քահանայից, որք
Հանդիպէք այսմ լուսազարդ մատենիս, յիշեցէք ի
մաքրափայլ յաղօթս ձեր զվերոյգրեալն: Ի Կեսարացի
եւ զաւառն Մանջիսօնցի մահտեսի Պօղոսն եւ որդեգիր
մահտեսի Սարգիսն եւ զամենայն ազգայինսն: Որ ստացաւ
զսուրբ գիրքս ի հաւալ յընչից իւրոց եւ ետ յիշատակ՝
Բիւզանդիոյ եւ իւր գէմն Ղալաթայ՝ Ս. Գրիգոր Լու-
սաւորչի Եկեղեցւոյն: . . .

Դարձեալ աղաչեմ զամենեւեան յիշել ի մաքրա-
փայլ յաղօթս ձեր՝ զմեղաւոր հող եւ գրիչս եւ զճնոգն
իմ զՊարսամ քահանայն եւ զԵւայ իրիցկինն, եւ
զկողակիցն իմ եւ զԿուլլի երեց կինն եւ զուսուցիչն իմ
զԱստուածատուր քահանայն եւ զսա յեա իրիցկինն, որ
բազում աշխատութեամբ անուցին եւ ուսուցին զիս . . .

Ելլել զօրինակիս շնորհողն, վարդապետ կամ
երէց, որ զօրինակն շնորհեցին եւ ստացան իւրեանց
բարի անուն եւ բարի յիշատակ:

“Քահանայք եւ Սարկաւագուռք առանց դատառակի
զգիրքս մի պահէք եւ ի մօմէ պատրաստ բռնեցէք եւ
զկարդալն անփոյթ մի առնէք. զի գրեալ է թէ տօնասէրն
չէ զրկած ի պսակաց մարտիրոսաց. այլ է հաղորդ նոցին
փառաց առանց դանից եւ տանջանաց . . .

Առաջին երեոի ստորին լուսանցքին վրայ,